

ԿԱՐԾԻՔ

ՄԱՐԻՆԵ ԱՂՎԱՆԻ ՓԻԼԻՊՈՍՅԱՆԻ՝

**«ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԼԵԶԿԻ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ
(ԱՆԳԼԵՐԵՆ ՆՅՈՒԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ՝ ԺԳ. 00.02 «ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ
ԵՎ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ» /ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ/ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ**

Միջազգային տնտեսական, քաղաքական և հասարակական կապերի ընդլայնման, ինչպես նաև աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում օտար լեզուների տիրապետումը մասնագիտական նպատակներով ձեռք է բերում առանցքային նշանակություն՝ հատկապես քաղաքագիտության ոլորտում ապագա մասնագետների պատրաստման գործընթացում: Գործնականում սովորողները հաճախ են բախվում տերմինաբանական և համատեքստային խոչընդոտների, ինչը նվազեցնում է հաղորդակցության արդյունավետությունը: Այս տեսանկյունից Մարինե Փիլիպոսյանի ատենախոսությունը բնութագրվում է արդիականությամբ և գիտագործնական նշանակությամբ, քանի որ այն միտված է մասնագիտական տերմինաբանության յուրացման և լեզվահաղորդակցական կարողությունների ձևավորման ու զարգացման հիմնախնդիրների տեսական և մեթոդական հիմնավորմանը:

Հետազոտության արդիականության և նպատակի հստակ ձևակերպումը ատենախոսին հնարավորություն է ընձեռել մշակել, ներկայացնել և գործնականում կիրառել քաղաքագիտական անգլերենի ուսուցման համապարփակ մեթոդական համակարգ, որը հիմնված է ոչ միայն տեսական սկզբունքների, այլև գիտագործնական լուրջ հիմնավորումների վրա:

Ատենախոսությունը ներառում է ներածություն, երեք գլուխ, եզրակացություն, օգտագործված գրականության ցանկ և հավելված: Ընդհանուր ծավալը կազմում է 160

համակարգչային էջ: Առկա են գծապատկերներ, տրամագրեր, աղյուսակներ, ուսուցողական պաստառներ, աշխատանքային թերթիկներ և նկարներ:

Ներածության մեջ հստակ սահմանված են հետազոտության նպատակը և խնդիրները: Հեղինակին հաջողվել է օբյեկտիվորեն ձևակերպել հետազոտության գիտական վարկածը, նորույթը, օբյեկտը, առարկան, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև պաշտպանության ներկայացված դրույթները:

Ատենախոսության առաջին գլխում՝ **«ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»**, հեղինակը հաջողությամբ համադրում է հատուկ նպատակների համար անգլերենի (ESP) դասավանդման տեսական հիմքերը քաղաքագիտական ոլորտի գործնական պահանջների հետ: Աշխատանքում առանձնակի կարևորվում է կարիքների վերլուծության դերը, որը ուսումնական նպատակների հստակ ձևակերպման և մասնագիտական լեզվահաղորդակցական կարողունակության ձևավորման հիմքն է: Ատենախոսը հանգամանորեն ներկայացնում է սովորողակենտրոն մոտեցումը, որտեղ լեզվանյութի ընտրությունն ու մատուցումը բխում են ուսանողի մասնագիտական պահանջմունքներից: Դրական է այն փաստը, որ հեղինակը գիտականորեն հիմնավորված տարանջատում է քաղաքական և քաղաքագիտական խոսույթները. եթե առաջինը դիտարկվում է որպես ներազդման և իշխանության իրացման գործիք, ապա երկրորդը ներկայացվում է որպես այդ գործընթացների օբյեկտիվ վերլուծության և գիտական մեկնաբանման հարթակ: Սույն գլխում արված տեսական հիմնավորումները, կատարված համակողմանի վերլուծությունը կրում են համակարգված բնույթ, արտացոլում են ոլորտի արդի զարգացումները և հուսալի տեսական հենք են ենթադրում քաղաքագիտական անգլերենի դասավանդման արդիական մեթոդիկայի մշակման համար:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ **«ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԼԵԶԿԱՆՅՈՒԹԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ»**, հեղինակն առաջարկում է լեզվանյութի ընտրության և մեթոդական դասակարգման հստակ չափանիշներ: Հեղինակը հաջողությամբ է իրականացրել տեսական նյութի և ուսուցման

համապատասխան մեթոդիկայի համադրումը՝ հիմնվելով հոգեբանալեզվաբանական լուրջ հայեցակարգերի վրա: Աշխատանքում տեղ գտած Ի. Բերմանի, Դ. Կանեմանի և Զ. Լակոֆի տեսությունների կիրառումը թույլ է տալիս խորությամբ բացահայտել քաղաքագիտական տերմինների յուրացման մեխանիզմները: Հատկապես ուշագրավ է ESP կարողունակության բաղադրիչների՝ հաղորդակցական, միջմշակութային և մասնագիտական հմտությունների համակարգված դիտարկումը:

Մ. Փիլիպոսյանը գիտականորեն հիմնավորում է բառապաշարային նվազագույնի ձևավորման անհրաժեշտությունը՝ կարևորելով վիճակագրական, լեզվաբանական և մեթոդական սկզբունքների ամբողջական համալիրը, ինչպիսիք են տերմինի գործածության հաճախականությունը, իմաստաբանական արժեքը, կապակցելիությունը և բառակազմական ներուժը: Սա թույլ է տալիս ընտրել այնպիսի տերմինաբանություն, որն առավելագույնս արտացոլում է քաղաքագիտական խոսույթի հասկացութային դաշտը և ապահովում ուսուցման նպատակայնությունը:

Աշխատանքի կարևորագույն ձեռքբերումներից է բառապաշարային և դարձվածային միավորների մեթոդական դասակարգումը, որտեղ հեղինակը, հիմնվելով հայերենի, անգլերենի և ռուսերենի զուգադրական քննության վրա, առանձնացրել է ութ հիմնական խումբ՝ համապատասխան ենթախմբերով: Սա զգալիորեն բարձրացնում է աշխատանքի կիրառական արժեքը՝ հեշտացնելով ուսումնական նյութի մատուցումը: Մեթոդական դասակարգման հիմքում կարևորվել են բառապաշարային միավորների ծանոթության աստիճանը և համատեքստային կիրառությունը, ինչպես նաև բարդ բառերի իմաստի կոահման և բառակազմական վերլուծության սկզբունքները: Բնագիր տեքստերի դերի արժևորումը և դրանց միջոցով քննական մտածողության զարգացման շեշտադրումը ևս մեկ անգամ փաստում է հետազոտության համապարփակ բնույթը:

Ատենախոսության երրորդ գլխում՝ «ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՈՒՄ. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ», հեղինակը հանգամանորեն ներկայացրել է փորձարարական ուսուցման կազմակերպման ընթացքը, կիրառված

առաջադրանքների տիպաբանությունը և արդյունքների վերլուծությունը: Հետազոտության շրջանակներում Մ. Փիլիպոսյանի կողմից առաջարկվող մեթոդական համակարգն աչքի է ընկնում իր գիտական նորույթով, հատկապես տեսողական օժանդակ նյութերի և արդի թվային տեխնոլոգիաների ներդաշնակ համադրման շնորհիվ: Դիդակտիկական տեսանկյունից առանձնակի արժեք են ներկայացնում ուսուցողական պաստառները, որոնք ներառում են մասնագիտական հաղորդակցական իրավիճակներ և առաջադրանքներ՝ խթանելով ուսանողների ոչ միայն լեզվահաղորդակցական կարողունակության, այլև նրանց քննական, վերլուծական և ստեղծագործական կարողությունների զարգացումը: Սույն պաստառները ծառայում են որպես յուրօրինակ «մտաքարտեզներ», որոնք օգնում են սովորողներին ընկալել քաղաքական երևույթների տրամաբանական փոխկապակցվածությունը: Աշխատանքում լեզվանյութի ընտրության և մատուցման հարցում հեղինակը ցուցաբերել է գիտագործնական մեթոդաբանական հետևողականություն: Որպես ուսուցման գործընթացի տրամաբանական շարունակություն՝ մշակված աշխատանքային թերթիկները ներառում են թիրախային վարժություններ և հաղորդակցական առաջադրանքներ, որոնք նպաստում են քաղաքագիտական տերմինաբանության համատեքստային և գործնական կիրառմանը՝ ապահովելով նյութի խորքային յուրացումը:

Թվային գործիքների ներդրումը ոչ միայն բարձրացնում է սովորողների ներգրավվածությունը, այլև ստեղծում է նպաստավոր պայմաններ մասնագիտական լեզվանյութի համակարգված ընկալման և արդյունավետ մտապահման համար:

Կարող ենք փաստել, որ Մ. Փիլիպոսյանի կողմից մշակված գործիքակազմը՝ ավանդական և ժամանակակից մեթոդների համադրությամբ մշակված առաջադրանքների, ուսուցողական պաստառների, աշխատանքային թերթիկների և ժամանակակից թվային գործիքների համալիր կիրառումը քաղաքագիտական անգլերենի դասավանդման արդյունավետ միջոց է: Ողջունելի է, որ մեթոդական համակարգի հիմքում դրված են կարողունակահեն և հաղորդակցական մոտեցումները, ինչը երաշխավորում է ձեռք բերված գիտելիքների գործնական կիրառելիությունը:

Նախափորձարարական և հետփորձարարական թեստավորման արդյունքները և դրանց համեմատության վիճակագրական պատկերը համոզիչ կերպով հավաստում են քաղաքագիտական անգլերենի ուսուցման առաջադրված մեթոդական համակարգի արդյունավետությունը:

Հետազոտությունն ավարտվում է եզրակացություններով, որոնք լիովին բխում են ատենախոսության առաջադիր խնդիրներից:

Արժևորելով Մ. Փիլիպոսյանի աշխատանքը՝ կցանկանայինք նշել որոշ դիտարկումներ.

1. Ցանկալի կլիներ, եթե մեթոդական համակարգի շրջանակում ատենախոսը հետազոտության մեջ կիրառված քաղաքագիտական անգլերենի ընտրված բառանյութը ներկայացներ նաև առանձին ցանկով:
2. Չնայած հեղինակը դիտարկում է մեղիա քաղաքագիտական խոսույթը, ուսումնական նյութերն առավել արդիական կլինեին, եթե ակադեմիական տեքստերից բացի մեծ տեղ հատկացվեր նաև սոցիալական հարթակներում քաղաքական գործիչների կողմից կիրառվող ոչ պաշտոնական, բայց ազդեցիկ լեզվական ռազմավարությունների վերլուծությանը:
3. Հեղինակը կարևորում է հաճախականության սկզբունքը բառապաշարի ընտրության համար: Աշխատանքը կշահեր, եթե հավելվածներում ներկայացվեր նաև այն բառարանների ցանկը, որոնց հիման վրա որոշվել է քաղաքագիտական տերմինների գործածման բարձր հաճախականությունը:
4. Աշխատանքում առկա են որոշ վրիպակներ, որոնք շտկման կարիք ունեն:

Դրական գնահատելով սույն աշխատանքը՝ կարող ենք վստահորեն պնդել, որ Մարինե Աղվանի Փիլիպոսյանի՝ «ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԼԵԶԿԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ (անգլերեն նյութի հիման վրա)» թեմայով ատենախոսությունն ինքնուրույն հետազոտություն է՝ կատարված գիտական, մանկավարժական, մեթոդաբանական և գործաբանական պատշաճ մակարդակով:

Ատենախոսությունում առաջադրված հիմնադրույթներն ու ստացված արդյունքները բնութագրվում են գիտական հիմնավորվածությամբ, տեսագործական արժեքով և կիրառական նշանակությամբ: Կատարված հետազոտությունն ամբողջովին բավարարում է մանկավարժական գիտությունների թեկնածուի բարձր աստիճանին ներկայացվող ՀՀ ԲԿԳԿ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջները, ուստի ատենախոս Մ. Փիլիպոսյանն արժանի է հայցվող ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» /անգլերեն լեզու/ մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:


Պաշտոնական ընդդիմախոս՝



Լուսինե Արմենի Հարությունյան
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հաստատում եմ պաշտոնական ընդդիմախոս բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լուսինե Արմենի Հարությունյանի ստորագրությունը

Դարբինյան Նաիրա Հրայրի



Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտքարտուղար

04.06.2026թ.

